

Նամակ խմբագրութեան

Ա. Էջմիածնի Սինօդի պոսումը.

«Մշակի» հրապարակախօսները թէ որքան բարեխըղճաբար են վերաբերում դէպի իրանց հակառակորդները՝ յայտնի է ամէնքին։ Նրանցից մէկը՝ Հ. Առաքելեան զբարտեց ինձ Տաթեսի պաշտօնավարութեանս ժամանակ արած իր գրամական զեղծումների մէջ յենուելով նշանակած քննութեան վրայ, առանց սպասելու քննութեան վախճանին։ Հարկաւ՝ որպէս զի, յետին մտքերով լարի հասարակական կարծէքը իմ դէմ՝ իրեւ Դիւանապետին ևս նոյն ժամանակ բողոքեցի այդպէս տգեղ ձևով ինձ մեղագրելու համար առանց դրական փաստերի և իմ ծտարուայ ամբիծ ծառայութեան վկայ կանչեցի բոլոր Զանգեղուրը։ Այսօր քննութիւնը վերջացած է, 1901—1906 թուի մատեանները քննուած ու իմ դէմ բողոքաւորների գանգատը ստուգութեան ենթարկուած և գրանց հիման վրայ Ա. Էջմիածնի՝ Սինօդի վճիռը արդէն արձակած է. բերելով այժմ՝ Սինօդի վճուի պատճէնը, որով համարում են ինձ վրայ եղած ամբաստանութիւնները անհիմն և զրպարտութիւն, և ինձ արդար այդ կէտերում, հրաւիրում եմ ինձ զրպարտող հրապարակախօսներին զգուշանալ անբարեխղճաբար մարդկանց տարապարտուց անուանարկելուց։ Ահա Սինօդի վճիռը. «Հրամայեցին. քանզի, որպէս երեխի ի քննութենէ գործոյս, անհիմն են անբաստանութիւնք զներսէս վարդապետէ Մելիք-Թանուգեան, ուստի ճանաչելով զնա արդար կարճել զայս գործ։ Իսկ զծախս քննչի պահանջել յամբաստանողաց ի ձեռն վիճակային կոնսիստորիային երեանայ, առաքելով զայն ի Սինօդն»։

Ա. Վ. Մելիք-Թանուգեան.